«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 148-Լ

ք. Երևան 28 նոյեմբերի 2025թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետի և Ինստիտուտի Գիտական Խորհրդի աշխատակարգի 20-րդ կետի 15-րդ ենթակետի, 77-րդ և 78-րդ կետերի դրույթներով՝ Ինստիտուտի Գիտական խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «2025-2026 ուսումնական տարվա որակի ներքին աուդիտի իրականացման ծրագիրը և ժամանակացույցը» համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված
«ՀՖԿՍՊԻ» Հիմնադրամի
Գիտական խորհրդի
28.11.2025թ. N 148-Լ որոշման

ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

ԱՈՒԴԻՏԻ ՈԼՈՐՏԸ" Գիտահետազոտական գործունեության կառավարման համակարգը:

Նպատակը"

Ինստիտուտի հավատարմագրման փորձագիտական զեկույցում ներկայացված խնդիրների համատեքստում վերլուծել գիտահետազոտական գործունեության կառավարման համակարգի արդյունավետությունը և առկա խնդիրները:

Խնդիրները.

1) Ուսումնասիրել վերջին 3 ուսումնական տարվա Ինստիտուտի գիտահետազոտական գործունեությունը, կատարված աշխատանքները, հետազոտական թեմաները, Սպորտ–Լաբ գիտահետազոտական կենտրոնի աշխատանքները
2) Ուսումնասիրել ամբիոնների ներգրավվածությունը Ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներում
3) Ուսումնասիրել ուսանողների ներգրավվածությունը Ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքներում
4) Ուսումնասիրել Ինստիտուտում ավարտական աշխատանքների որակը և ակադեմիական ազնվության կարգի պահպանումը
5) Վեր հանել հիմնական խնդիրները և հնարավորության դեպքում առաջարկել դրանց լուծման ուղիներ:

Աուդիտի իրականացման ձևաչափը"

- Ըստ համաձայնեցված ժամանակացույցի՝ հանդիպել ռեկտորի, գիտական գծով պրոռեկտորի, Գիտական քարտուղարի, Գիտահետազոտական և մեթոդական բաժնի, Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի, Սպորտ–Լաբ գիտահետազոտական կենտրոնի հետ
- Դիտարկել Ինստիտուտի գիտական գործունեության հաշվետվությունները, ամբիոններում առկա գիտական գործունեության արդյունքները
- Անցկացնել հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ ներքին շահակիցների հետ
- Կազմել աուդիտի համապարփակ հաշվետվություն:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ[1]

Հ/Հ	Հանդիպման մասնակիցներ	Ժամկետ
1.	Ռեկտոր	Առաջին կիսամյակ
2.	Գիտական գծով պրոռեկտոր	
3.	Գիտական քարտուղար	
4.	Գիտահետազոտական և մեթոդական բաժին	
5.	Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժին	
6.	Սպորտ–Կաբ գիտահետազոտական կենտրոն	
7.	Սպորտ–Կաբ գիտահետազոտական կենտրոնի ռեսուրսների դիտարկում	
8.	Վերջին 3 տարվա Ինստիտուտի գիտական գործունեության հաշվետվությունների ուսումնասիրություն	Երկրորդ կիսամյակ
9.	Դեկանների, ամբիոնի վարիչների հետ ֆոկուս խմբային քննարկում	
10.	Դասախոսական կազմի հետ ֆոկուս խմբային քննարկում	
11.	Ուսանողական կազմի հետ ֆոկուս խմբային քննարկում	
12.	Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի օրինակների ուսումնասիրություն	

[1] *Ժամանակացույցում նշված ժամկետները ենթակա են հստակեցման պաշտոնատար անձանց/ստորաբաժանումների հետ փոխադարձ համաձայնեցման արդյունքում*